**Հավելված 4**
**«ԳԻՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳԻՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1-1

ք.Երևան ____/___________/2018թ.

Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ-ը ի դեմս Կ.Տոնոյան-ի, որը գործում է Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Նատալի ֆարմ-ը, ի դեմս տնօրեն Ասատուր Ասատրյան-ի, որը գործում է Նատալի ֆարմ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու

պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝
ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:
2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:
2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.
2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 7 օրից ավելի,
2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
**2.2 Գնորդը պարտավոր է՝**
2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին

հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

**2.3 Վաճառողն իրավունք ունի`**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը։

**2.4 Վաճառողը պարտավոր է`**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը` պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք` պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը։

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին։

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 519637.48 (հինգ հարյուր տասնիննը հազար վեց հարյուր երեսունյոթ քառասունութ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն ։ Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը,

փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 8.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պարանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:
4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 10 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները,

հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի` պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման

յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։
8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը։ Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է։
8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը։
8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի։ Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը։
8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը։ Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից։
8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։
8.13 Պայմանագիրը կազմված է __ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ։ Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի

անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

---

[1]Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

[2]Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ** | **Նատալի ֆարմ** |
| **Հասցե` ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 21 շ.** | **Հասցե` ք.Երևան,Տիչինայի 3նրբ.,2/2** |
| **Հայէկոնոմբանկ ԲԲԸ** | **Ամերիաբանկ ՓԲԸ** |
| **163128117575** | **1570005065330100** |
| **05533967** | **01222567** |
| **Կ.Տոնոյան** | **Ասատուր Ասատրյան** |
| **___________** | **___________** |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |
| Digitally signed by TONOYAN KARINE 5702590228<br>Date: 2018.12.21 13:28:54 AMT | Digitally signed by MKRTCHYAN ARSHALUYS 6808770476<br>Date: 2018.12.10 10:41:00 AMT |

Հավելված N 1
____/____________/2018թ. կնքված
ԳԻՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 4 | 33661127/507 | մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) N02BB02 Անալգին | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ Հայաստանի Հանրապետություն | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում) լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 500մգ/մլ,2 մլ | հատ | 31.05 | 40365.00 | 1300 | Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 1300 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ամպուլներ (10) Կցված է [185f27f5.pdf](185f27f5.pdf) | | | | | | | |
| 5 | 33611170/512 | դրոտավերին 40մգ 2մլ Դրոտավերին | Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս | դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ) drotaverine (drotaverine hydrochloride)լուծույթ ներարկման20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) Կցված է [bbb36f76.pdf](bbb36f76.pdf) | հատ | 54.18 | 2709.00 | 50 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 50 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 8 | 33671130/506 | դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 1մլ Դիմեդրոլ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ Հայաստանի Հանրապետու | դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydrami | հատ | 21.73 | 43479.99 | 2000 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 2000 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թյուն | ne hydrochloride)լուծույթ ներարկման10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10) Կցված է [488c27d6.pdf] | | | | | | | |
| 10 | 33631290/506 | իբուպրոֆեն Իբուպրոֆեն | «Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան» ԲԲԸ Բելառուս | իբուպրոֆենibuprofeոդեղահատեր թաղանթապատ200մգ, բլիստերում (10/1x10/), (50/5x10/) Կցված է [7d51b635.pdf] | հատ | 5.40 | 1080.00 | 200 | հասցեն | ենթակաքանակը | ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 200 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 11 | 33631310/505 | դիկլոֆենակ Դիկլոֆենակ | Լեկխիմ-Խարկով ԲԸ Ուկրաինա | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)լու | հատ | 78.40 | 4704.00 | 60 | հասցեն | ենթակաքանակը | ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 60 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծույթ մ/մ և ն/ե ներար կման25մգ/ մլ, 3մլ ամ պուլներ, բլ իստերում (5, 5/1x5/) Կցված է [4329778a. pdf] | | | | | | | |
| 12 | 33671114/ 510 | ամինոֆիլի ն Էուֆիլին | Երևանի Քիմիադեղա գործա- կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 6 Հայաստա նի Հանրա պետությու ն | ամինոֆիլի ն aminoph yllineլուծու յթ ն/ե ներ արկման24 մգ/մլ,5մլ ա մպուլներ( 10) Կցված է [654536e6. pdf] | հատ | 37.26 | 26082.00 | 700 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակաց ի 21շ ՓԲԸ | 700 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 13 | 33611150/ 506 | պանկրեա տին Կրեոն-10 000 | Աբբոտտ Լ աբորատո րիես ԳմբՀ Գերմանիա | պանկրեա տին (լիպազ 10000ԵՖՄ, ամիլազ | հատ | 105.00 | 315000.00 | 3000 | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակաց ի 21շ ՓԲԸ | 3000 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 8000 ԵՖՄ, պրոտեազ 600 ԵՖՄ)pancreatin (lipase 10000PhEU, amylase 8000 PhEU, protease 600 PhEU) դեղապատիճներ աղելույծ150մգ, բլիստերում (20/2x10/),պլաստիկե տարայում (20) Կցված է cfda266c.pdf | | | | | | | |
| 14 | 33611160/506 | մետոկլոպրամի Մետոկլոպրամիդ | "Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ Բելառուս | մետոկլոպրամիդ (մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ) metoclopramide (metocl | հատ | 51.43 | 5143.99 | 100 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| | | | | | | | | | Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 100 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | opramide hydrochloride)լուծույթն երարկման 5մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/1x10/) Կցված է [bf1cf267.pdf](bf1cf267.pdf) | | | | | | | |
| 16 | 33651131/506 | սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ Սուլֆապրիմ | Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ Հայաստանի Հանրապետություն | սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմsulfamethoxazole, trimethoprimդեղակախույթ ներքին ընդունման40մգ/մլ+8մգ/մլ,100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ Կցված է | հատ | 650.00 | 39000.00 | 60 | հասցեն<br>Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | ենթակա քանակը<br>60 | Ժամկետը**<br>մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | bf692d00.pdf | | | | | | | |
| 20 | 33621330/502 | նիկեթամիդ / 0,25գ/մլ 2մլ/ Կորդիամին | Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ Ուկրաինա | նիկեթամիդ nikethamideլուծույթ ներարկման250մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում(10, 10/2x5/) Կցված է 629c1c76.pdf | հատ | 112.14 | 1121.40 | 10 | հասցեն<br>Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | ենթակա քանակը<br>10 | ժամկետը**<br>մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 21 | 33621340/502 | կոֆեին նատրիումի բենզոատ N06BC01 Կոֆեին-նատրիումի բենզոատ | Երևանի Քիմիադեղագործական ֆիրմա ԲԲԸ Հայաստանի Հանրապետություն | կոֆեին նատրիումի բենզոատcaffeine-sodium benzoateլուծույթ ներարկման200մգ/մլ,1մլ ամպուլներ(10) Կցված է 3a386efd.pdf | հատ | 37.26 | 372.60 | 10 | հասցեն<br>Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | ենթակա քանակը<br>10 | ժամկետը**<br>մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 22 | 33621440/ | բենդազոլ ( | Երևանի Ք | բենդազոլ | հատ | 24.84 | 496.80 | 20 | հասցեն | ենթակա | ժամկետը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 502 | բենդազոլի հիդրոքլորիդ) C04AX Դիբազոլ | իմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստանի Հանրապետություն | bendazolլուծույթ մ/մ ներարկման10մգ/մլ, 1մլ ամպուլներ(10) Կցված է [f002aa5d.pdf]() | | | | | <br>Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | քանակը<br>20 | <br>մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 24 | 33661170/502 | Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) N01BA02 Նովոկային | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստանի Հանրապետություն | "պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ)¶procaine (procaine hydrochloride)լուծույթ ներարկման 5մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ Կցված է [271328ff.pdf]() | հատ | 18.63 | 186.30 | 10 | հասցեն<br>Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | ենթակա քանակը<br>10 | ժամկետը**<br>մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 25 | 33661125/503 | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտ | “Բորիսովյան բուժպատրաստուկների գո | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտ | հատ | 150.00 | 750.00 | 5 | հասցեն<br>Ք. Գյումրի Շիրակաց | ենթակա քանակը<br>5 | ժամկետը**<br>մինչև 25 դեկտեմբերի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52 , A03DA02 , N02BB52 Uպազմատոն | րծարան” ԲԲԸ Բելառուս | ոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդmetamizole (metamizole sodium), pitofenone (pitofenone hydrochloride), fenpiverinium bromideլուծույթ ներարկման2500 մգ/5մլ+ 10 մգ/5մլ+0,1 մգ/5մլ, 5մլ ամպուլներ պիտակ բանդերոլ (10), 5մլ ամպուլներ, բլիստերում (10/2x5)¶ | | | | | ի 21շ ՓԲԸ | | 2019թ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կցված է [d847903e.pdf](d847903e.pdf) | | | | | | | |
| 26 | 33691145/502 | մագնեզիումի սուլֆատ a06ad04, a12cc02, b05xa05, d11ax05, v04cc02 Մագնեզիումի սուլֆատ | Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստանի Հանրապետություն | մագնեզիումի սուլֆատ magnesium sulfateլուծույթ ներարկման250մգ/մլ,5մլ ամպուլներ (10) Կցված է [b7d90a6e.pdf](b7d90a6e.pdf) | հատ | 31.05 | 310.50 | 10 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| | | | | | | | | | ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 10 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 27 | 33691220/502 | ինոզին-C01EB Ռիբոքսին | Բելմեդպրեպարատի ՀՈՒ Բելառուս | ինոզին inosineդեղահատեր թաղանթապատ200մգ, բլիստերում (50/5x10/) Կցված է [e3fa7578.pdf](e3fa7578.pdf) | հատ | 6.19 | 37140.00 | 6000 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| | | | | | | | | | ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | 6000 | մինչև 25 դեկտեմբերի 2019թ |
| 28 | 33621290/502 | էպինեֆրին (ադրենալին) | Զդորովյե Դեղագործական Ընկ | պինեֆրին (էպինեֆրինի հիդրոտ | հատ | 131.52 | 1315.20 | 10 | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| | | | | | | | | | ք. Գյումրի | 10 | մինչև 25 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01 Ադրենալին-Զդորովյ | երություն ՍՊԸ Ուկրաինա | արտրատ) լուծույթ ներարկման 1,82մգ/մլ,1 մլ ամպուլներ բլիստերում , 10/2x5/),1մլ ամպուլներ Կցված է [978342c9.pdf](978342c9.pdf) | | | | | Շիրակացի 21շ ՓԲԸ | | դեկտեմբերի 2019թ |
| 30 | 33661147/502 | նեոստիգմին n07aa01, s01eb06 Պրոզերին-Դարնիցա | Դարնիցա դեղագործական ֆիրմա Ուկրաինա | նեոստիգմին (նեոստիգմինի մեթիլսուլֆատ) neostigmine (neostigmine methylsulfate) լուծույթ ներարկման0,5մգ/մլ,1մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5/)) Կցված է | հատ | 38.07 | 380.70 | 10 | հասցեն<br>Ք. Գյումրի Շիրակացի 21շ ՓԲԸ | ենթակա քանակը<br>10 | Ժամկետը**<br>մինչև 25 դեկտեմբերի 2019թ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2bd330e2.pdf | | | | | |

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

** Այս սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**ԳՆՈՐԴ**

**Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ**

**Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 21 շ.**

**Հայէկոնոմբանկ ԲԲԸ**

**163128117575**

**05533967**

**Կ.Տոնոյան**

___________

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by TONOYAN KARINE
5702590228
Date: 2018.12.21 13:29:24 AMT

**ՎԱՃԱՌՈՂ**

**Նատալի ֆարմ**

**Հասցե՝ ք.Երևան,Տիչինայի 3նրբ.,2/2**

**Ամերիաբանկ ՓԲԸ**

**1570005065330100**

**01222567**

**Ասատուր Ասատրյան**

___________

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

Digitally signed by MKRTCHYAN
ARSHALUYS 6808770476
Date: 2018.12.10 10:41:51 AMT

Հավելված N 2
____/____________/2018թ. կնքված
ԳԻՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ.-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 4 | 33661127/507 | մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) N02BB02 | | | | | | | | | | | | | 40365.00 |
| 5 | 33611170/512 | դրոտավերին 40մգ 2մլ | | | | | | | | | | | | | 2709.00 |
| 8 | 33671130/506 | դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 1մլ | | | | | | | | | | | | | 43479.99 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 33631290/506 | իբուպրոֆեն | | | | | | | | | | | | | 1080.00 |
| 11 | 33631310/505 | դիկլոֆենակ | | | | | | | | | | | | | 4704.00 |
| 12 | 33671114/510 | ամինոֆիլին | | | | | | | | | | | | | 26082.00 |
| 13 | 33611150/506 | պանկրեատին | | | | | | | | | | | | | 315000.00 |
| 14 | 33611160/506 | մետոկլոպրամի | | | | | | | | | | | | | 5143.99 |
| 16 | 33651131/506 | սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ | | | | | | | | | | | | | 39000.00 |
| 20 | 33621330/502 | Նիկեթամիդ /0,25գ/մլ 2մլ/ | | | | | | | | | | | | | 1121.40 |
| 21 | 33621340/502 | կոֆեին նատրիումի բենզոատ N06BC01 | | | | | | | | | | | | | 372.60 |
| 22 | 33621440/502 | բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ) C04AX | | | | | | | | | | | | | 496.80 |
| 24 | 33661170/502 | Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) N01BA02 | | | | | | | | | | | | | 186.30 |
| 25 | 33661125/503 | մետամիզոլ (մետամիզոլ | | | | | | | | | | | | | 750.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52 , A03DA02 , N02BB52 | | | | | | | | | | | | | |
| 26 | 33691145/502 | մագնեզիումի սուլֆատ a06ad04, a12cc02, b05xa05, d11ax05, v04cc02 | | | | | | | | | | | | | 310.50 |
| 27 | 33691220/502 | ինոզին-C01EB | | | | | | | | | | | | | 37140.00 |
| 28 | 33621290/502 | էպինեֆրին (ադրենալին) a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01 | | | | | | | | | | | | | 1315.20 |
| 30 | 33661147/502 | նեոստիգմին n07aa01, | | | | | | | | | | | | | 380.70 |

| | | s01eb06 | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ` որպես դրա անբաժանելի մաս:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| **Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ** | **Նատալի ֆարմ** |
| **Հասցե` ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացի 21 շ.** | **Հասցե` ք.Երևան,Տիչինայի 3նրբ.,2/2** |
| **ՀայԷկոնոմբանկ ԲԲԸ** | **Ամերիաբանկ ՓԲԸ** |
| **163128117575** | **1570005065330100** |
| **05533967** | **01222567** |
| **Կ.Տոնոյան** | **Ասատուր Ասատրյան** |
| **__________** | **__________** |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |
| Digitally signed by TONOYAN KARINE 5702590228<br>Date: 2018.12.21 13:29:56 AMT | Digitally signed by MKRTCHYAN ARSHALUYS 6808770476<br>Date: 2018.12.10 10:42:14 AMT |

Հավելված N 3
____/____________/2018թ. կնքված
ԳԻՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը` __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները`

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների,մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 4 | մետամիզոլ (մետամիզոլի նա | մետամիզոլ (մետամիզոլ նատ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տրիում) N02BB02 | րիում) լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 500մգ/մլ,2մլ ամպուլներ (10)(Կցված է 185f27f5.pdf) | | | | | | | |
| 5 | դրոտավերին 40մգ 2մլ | դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ)drotaverine (drotaverine hydrochloride) լուծույթ ներարկման20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)(Կցված է bbb36f76.pdf) | | | | | | | |
| 8 | դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 1մլ | դիֆենհիդրամին (դիֆենհիդրամինի հիդրոքլորիդ) diphenhydramine (diphenhydramine hydrochloride)լուծույթ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10)(Կցված է | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 488c27d6.pdf) | | | | | | | |
| 10 | իբուպրոֆեն | իբուպրոֆենibuprofeոդեղահատեր թաղանթապատ200մգ, բլիստերում(10/1x10/, (50/5x10/) (Կցված է 7d51b635.pdf) | | | | | | | |
| 11 | դիկլոֆենակ | դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)diclofenac (diclofenac sodium)լուծույթ մ/մ և ն/ե ներարկման25մգ/մլ, 3մլ ամպուլներ, բլիստերում (5, 5/1x5/)(Կցված է 4329778a.pdf) | | | | | | | |
| 12 | ամինոֆիլին | ամինոֆիլին aminophyllineլուծույթ ն/ե ներարկման24մգ/մլ,5մլ ամպուլներ(10)(Կցված է 654536e6.pdf) | | | | | | | |
| | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | պանկրեատին | պանկրեատին (լիպազ 10 000ԵՖՄ, ամիլազ 8000 ԵՖՄ, պրոտեազ 600 ԵՖՄ)pancreatin (lipase 10 000PhEU, amylase 8000 PhEU, protease 600 PhEU) դեղապատիճներ աղելույծ150 մգ, բլիստերում (20/2x10/),պլաստիկե տարայում (20)(Կցված է cfda266c.pdf) | | | | | | | |
| 14 | մետոկլոպրամի | մետոկլոպրամիդ (մետոկլոպրամիդի հիդրոքլորիդ) metoclopramide (metoclopramide hydrochloride)լուծույթներարկման 5մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստե | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | րում (10, 10/1x10/)(Կցված է bf1cf267.pdf) | | | | | | | |
| 16 | սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ | սուլֆամեթօքսազոլ, տրիմեթոպրիմsulfamethoxazole, trimethoprimդեղակախույթ ներքին ընդունման40մգ/մլ+8մգ/մլ,100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ(Կցված է bf692d00.pdf) | | | | | | | |
| 20 | Նիկեթամիդ / 0,25գ/մլ 2մլ/ | Նիկեթամիդ nikethamideլուծույթ ներարկման250մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5/)(Կցված է 629c1c76.pdf) | | | | | | | |
| 21 | կոֆեին նատրիումի բենզոատ N06BC01 | կոֆեին նատրիումի բենզոատ caffeine-sodium benzoateլուծ | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ույթ ներարկման200մգ/մլ,1մլ ամպուլներ(10)(Կցված է 3a386efd.pdf) | | | | | | | |
| 22 | բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ) C04AX | բենդազոլ bendazolլուծույթ մ/մ ներարկման10մգ/մլ, 1մլ ամպուլներ(10)(Կցված է f002aa5d.pdf) | | | | | | | |
| 24 | Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) N01BA02 | "պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ)¶procaine (procaine hydrochloride)լուծույթ ներարկման 5մգ/մլ; (10) ամպուլներ 2մլ(Կցված է 271328ff.pdf) | | | | | | | |
| 25 | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52 , A03DA02 , N02BB52 | ֆենպիվերինիում բրոմիդmetamizole (metamizole sodium), pitofenone (pitofenone hydrochloride), fenpiverinium bromideլուծույթ ներարկման2 500մգ/5մլ + 10մգ/5մլ+0,1մգ/5մլ, 5մլ ամպուլներ պիտակ բանդերոլ (10), 5մլ ամպուլներ, բլիստերում (10/2x5) ¶(Կցված է d847903e.pdf) | | | | | | | |
| 26 | մագնեզիումի սուլֆատ a06ad04, a12cc02, b05xa05, d11ax05, v04cc02 | մագնեզիումի սուլֆատ magnesium sulfateլուծույթ ներարկման 250մգ/մլ,5մլ ամպուլներ (10)(Կցված է b7d90a6e.pdf) | | | | | | | |
| 27 | ինոզին-C01EB | ինոզին inosineդեղա | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հատեր թաղանթապատ200մգ, բլիստերում (50/5x10/)(Կցված է e3fa7578.pdf) | | | | | | | |
| 28 | էպինեֆրին (ադրենալին) a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01 | պինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) լուծույթ ներարկման 1,82մգ/մլ,1մլ ամպուլներ բլիստերում , 10/2x5/),1մլ ամպուլներ(Կցված է 978342c9.pdf) | | | | | | | |
| 30 | նեոստիգմին n07aa01, s01eb06 | նեոստիգմին (նեոստիգմինի մեթիլսուլֆատ) neostigmine (neostigmine methylsulfate)լուծույթ ներարկման0,5մգ/մլ,1մլ ամպուլներ, բլիստերում(10, 10/2x5/)(Կցված է | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2bd330e2.pdf) | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ապրանքը հանձնեց** | **Ապրանքը ընդունեց** |
|---|---|
| ____________________________ | ____________________________ |
| **ստորագրություն** | **ստորագրություն** |
| ____________________________ | ____________________________ |
| **ազգանուն, անուն** | **ազգանուն, անուն** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված N 3.1
____/___________/2018թ. կնքված
ԳԻՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց ՓԲԸ (այսուհետ՝ Վաճառող)
միջև 20 թ.______________________________ -ին կնքված N________________________________ պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________________-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) N02BB02 | հատ | |
| դրոտավերին 40մգ 2մլ | հատ | |
| դիֆենհիդրամին d04aa32, d04aa32 1մլ | հատ | |
| իբուպրոֆեն | հատ | |
| դիկլոֆենակ | հատ | |
| ամինոֆիլին | հատ | |
| պանկրեատին | հատ | |
| մետոկլոպրամի | հատ | |
| սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ | հատ | |
| նիկեթամիդ / 0,25գ/մլ 2մլ/ | հատ | |
| կոֆեին նատրիումի բենզոատ N06BC01 | հատ | |
| բենդազոլ (բենդազոլի հիդրոքլորիդ) C04AX | հատ | |
| Պրոկային (պրոկայինի հիդրոքլորիդ) N01BA02 | հատ | |
| մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիումի բրոմիդ N02BB52 , A03DA02 , | հատ | |

| | | |
|---|---|---|
| N02BB52 | | |
| մագնեզիումի սուլֆատ a06ad04, a12cc02, b05xa05, d11ax05, v04cc02 | հատ | |
| ինոզին-C01EB | հատ | |
| էպինեֆրին (ադրենալին) a01ad01, b02bc09, c01ca24, r01aa14, r03aa01, s01ea01 | հատ | |
| նեոստիգմին n07aa01, s01eb06 | հատ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

____________________________

ազգանուն, անուն

____________________________

ստորագրություն

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________________

ազգանուն, անուն

____________________________

ստորագրություն